«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ստեղծագործական մտքի զարգացումը տարրական դասարաններում
ՀԵՂԻՆԱԿ	Անի Բաբաջանյան
ՄԱՐԶ	Երևան
ԴՊՐՈՑ	«Երևանի Մոնթե Մելքոնյանի անվան համար 11 հիմնական դպրոց»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Գլուխ 1 Ստեղծագործական մտքի զարգացման խնդիրը երեխաների մոտ_____4

Գլուխ 2 Ստեղծագործական ներուժի զարգացման հիմնական փուլերը և առանձնահատկությունները_____7

Գլուխ 3 Դպրոցական տարիքի հոգեբանական առանձնահատկությունները_____ 9

Գլուխ 4 Փորձարարական հետազոտություններ՝ ուղղված դպրոցահասակ երեխաների մոտ ստեղծագործական մտքի զարգացման բացահայտմանը_____12

Եզրակացություն_____ 14

Օգտագործված գրականության ցանկ_____ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտական հետազոտությունները փաստում են, որ ստեղծարարությունը նպաստում է ընդհանուր զարգացմանը՝ ձևավորում է հուզական ոլորտը, կատարելագործում է մտածողությունը, երեխան դառնում է ընկալունակ արվեստի և գեղեցիկի նկատմամբ: Դպրոցում մանկավարժների խնդիրը բոլոր երեխաներին բնածին կերպով տրված ստեղծագործական պոտենցիալի վերհանումն ու զարգացումն է:

Երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացման խնդիրը, 21-րդ դարում, մանկավարժության հիմնական խնդիրներից է, քանի որ 21-րդ դարն իր բնույթով կարծրատիպեր կոտրող և «քառակուսուց դուրս» մտածողություն թելադրող ժամանակաշրջան է, հարկավոր է, որ երեխան ևս՝ փոքր տարիքից դուրս գա իրեն սահմանափակող մտածողության ստանդարտներից, մտածի ավելի բաց և բազմակողմանի: Բացի այդ, ներկայիս տեխնիկապես հագեցված ժամանակաշրջանում մեծ խնդիր է երեխաների համար հետաքրքրություն ներկայացնող ստեղծագործական աշխատանքի ընտրությունը: Այն պետք է լինի նորույթ, պետք է հետաքրքրություն շարժի, հաճելի և գրավիչ լինի:

Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, երեխայի ակտիվ հետաքրքրասիրությունը, ստեղծագործելու ինքնաբուխ պահանջը՝ դպրոցի առաջ դրվող այս խնդիրն առավել իրատեսական է դառնում:

Հետազոտության նպատակն է զարգացնել կրտսեր դպրոցահասակ երեխաների ստեղծագործական ունակությունները, երեխաների մոտ ձևավորել, զարգացնել բառապաշարը, կապակցված խոսք կառուցելու ունակությունները, զարգացնել երևակայությունը, պատմելու կարողությունը, արտահայտիչ խոսքի ձևավորումը:

Գլուխ 1. Ստեղծագործական մտքի զարգացման խնդիրը դպրոցահասակ երեխաների մոտ

Ստեղծագործական մտքի զարգացման խնդիրը լայնորեն ուսումնասիրվել է պատմական հոգեբանության մեջ:

Ներկայումս հետազոտողները փնտրում են ստեղծագործ անհատականությանը բնութագրող անբաժանելի ցուցանիշ, որը կմիավորի բոլոր օժտված անձանց: Այս ցուցանիշը կարող է սահմանվել որպես գործոնների ինչ-որ համակցություն կամ դիտարկվել որպես ստեղծագործական մտածողության ընթացակարգային և անձնական բաղադրիչների շարունակական միասնություն:[1]

Ստեղծագործական մտքի զարգացման խնդրի լուծմանն ուղղված վերլուծությունների մեջ մեծ ներդրում ունեն այնպիսի հոգեբաններ, ինչպիսիք են՝ Բ.Մ. Թեպլովը, Ս.Լ. Ռուբինշտեյնը, Բ.Գ. Անանիևը, Ն.Ս. Լեյտեսը, Վ.Ա. Կրուտեցկին, Ա.Գ. Կովալևը, Կ.Կ. Պլատոնովը և ուրիշներ:

Հիմք ընդունելով գիտնականների և հոգեբանների դիրքորոշումները, որոնք ստեղծագործական կարողությունները սահմանում են որպես անձից անկախ գործոն, որոնց զարգացումը նաև կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության ուսուցման արդյունք է, կարող եմ առանձնացնել կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների բաղադրիչները՝

- ստեղծագործական մտածողություն,
- ստեղծագործական երևակայություն,
- ստեղծագործական գործունեության կազմակերպման մեթոդների կիրառում:

Դպրոցահասակ երեխաների ստեղծագործական մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացման համար կարելի է առանձնացնել հետևյալ առաջադրանքները.

- դասակարգել առարկաները, իրավիճակները, երևույթները տարբեր հիմքերով կամ միանման հատկանիշներով
- պատճառահետևանքային կապերը հասկանալ, բացատրել, հաստատել

[1] **Բ.Ս. Մուխինա «Անձի լինելիության և զարգացման ֆենոմենը» 2007**

- տեսնել փոխկապակցումները և բացահայտել համակարգերի միջև նոր կապեր
- դիտարկել համակարգը զարգացման փուլում
- հեռանկարային բնույթի ենթադրություններ անել, փորձել կանխատեսել, առաջարկել վարկածներ
- ընդգծել օբյեկտի հակառակ նշանները, տալ հակառակ բացատրություններ
- բացահայտել և ձևավորել օբյեկտի հատկությունները կամ կիրառման հնարավորությունները
- տարանջատել օբյեկտների հակասական հատկությունները տարածության և ժամանակի մեջ
- ներկայացնել և պատկերել տարածական օբյեկտներ:

Ստեղծագործական մտքի զարգացմանն ուղղված առաջադրանքները տարբերվում են այնպիսի պարամետրերով, ինչպիսիք են դրանցում պարունակվող խնդրահարույց իրավիճակների բարդությունը, դրանց լուծման համար անհրաժեշտ մտավոր գործողությունների բարդությունը, հակասությունների ներկայացման ձևերը և այլն:[2]

Այս առումով առանձնացնում են բարդության 3 աստիճան կամ մակարդակ՝

- 3-րդ կամ սկզբնական մակարդակ՝ առաջին և երկրորդ դասարանների աշակերտների համար:

Որպես օբյեկտ այս մակարդակի համար կիրառվում է կոնկրետ առարկան, երևույթը կամ մարդկային ռեսուրսը: Այս մակարդակի ստեղծագործական առաջադրանքները նախատեսված են ստեղծագործական ինտուիցիայի և տարածական երևակայության զարգացման համար: Օրինակ՝ թվարկել գդալի օգտագործման տարբեր եղանակներ, կանխատեսել եղանակը՝ ըստ երկնքի, տարբերակել եղանակներն ըստ գույների և այլն:

- 2-րդ մակարդակ՝ երրորդ, չորրորդ, հինգերորդ դասարանների աշակերտների համար:

Բարդության 2-րդ մակարդակի առաջադրանքները մեկ քայլ ցածր են և ուղղված են համակարգային մտածողության, երևակայության, հիմնականում երեխայի մոտ ստեղծագործական ալգորիթմական մեթոդների հիմքերի զարգացմանը: Այս մակարդակի առաջադրանքների օբյեկտի տակ է «համակարգ» հասկացությունը, ինչպես նաև համակարգերի ռեսուրսները: Դրանք ներկայացված են անորոշ խնդրահարույց իրավիճակի տեսքով կամ պարունակում են բացահայտ

[2] **Լ Վ. Կուզնեցովա «Մասնագիտական հոգեբանության հիմունքները» 2008**

հակասություններ: Այս տիպի առաջադրանքների նպատակն է զարգացնել ուսանողների համակարգային մտածողության հիմքերը: Օրինակ՝ թիմային աշխատանքների կատարում, որևէ երևույթի բացասական և դրական կողմերի բացահայտում:

- 1-ին մակարդակ՝ ավելի բարձր հասակի աշակերտների համար:

  Սրանք բաց խնդիրներ են ՝ գիտելիքի տարբեր ոլորտներից, որոնք պարունակում են թաքնված հակասություններ: Օբյեկտի դերում դիտարկվում են կենսահամակարգերը, պոլիհամակարգերը, ցանկացած համակարգային ռեսուրսները: Դրանք ուղղված են դիալեկտիկական մտածողության հիմքերի զարգացմանը, առաջնորդող երևակայությանը, ստեղծագործական ալգորիթմական մեթոդների գիտակցված կիրառմանը: Օրինակ՝ երկխոսությունների կազմում, շարադրությունների կազմում, որևէ խնդրի լուծմանն ուղղված քայլերի հաջորդականության մշակում:

  Փոքր տարիքի երեխաների հաղորդակցման և ակտիվ գործունեության մեծ մասն անցկացվում են երևակայության շնորհիվ: Նրանց խաղերն իրենց երևակայության բուռն աշխատանքի արգասիքն են, նրանք եռանդով զբաղվում են ստեղծագործական գործունեությամբ: Վերջինիս հոգեբանական հիմքը նույնպես ստեղծագործական երեւակայությունն է: Երբ սովորելու գործընթացում երեխաները բախվում են վերացական նյութը հասկանալու անհրաժեշտության հետ և նրանց անհրաժեշտ են նմանություններ, աջակցություն կյանքի ընդհանուր փորձի բացակայության հետ կապված, երևակայությունը նույնպես օգնում է երեխային:

  Այնուամենայնիվ, երևակայությունն, ինչպես մտավոր արտացոլման ցանկացած ձև, պետք է ունենա զարգացման դրական ուղղություն: Այն պետք է նպաստի անձի ավելի լավ բացահայտմանը և ինքնակատարելագործմանը շրջապատող աշխարհի իմացության տեսանկյունից, այլ ոչ թե վերածվի պասիվ երազանքի:

Գլուխ 2 Ստեղծագործական ներուժի զարգացման հիմնական փուլերը և առանձնահատկությունները

Ըստ փիլիսոփայական բառարանի՝ ստեղծարարությունը կամ «կրեատիվությունը» (լատ.՝ creo - ստեղծել, արարել) ստեղծելու, ստեղծագործական ակտի կարողությունն է, որը հնարավորություն է տալիս նայել որևէ խնդրի նոր, բոլորովին այլ հայացքով: Ստեղծագործական ընդունակությունները կարող են դրսևորվել անհատների մտածողության մեջ, նրանց աշխատանքային գործունեության արդյունքներում:

Վերջին շրջանում ստեղծագործությունն ավելի հաճախ դիտարկվում է որպես հոգեկան ակտիվության ձև, որպես ունիվերսալ ընդունակություն, որն ապահովում է տարբեր բնույթի գործունեության տեսակների հաջող իրագործումը:

Հոգեբանական հետազոտություններում ստեղծարարությունը բնութագրվում է անհատի ինտելեկտուալ և անձնային առանձնահատկությունների համախմբով, որոնք նպաստում են առանձնահատուկ մտքերի հղացմանը և դրանց յուրօրինակ լուծումների հայտնաբերմանը: Ստեղծարարությունը, այսպիսով, հնարավոր է դառնում դիտարկել որպես անհատի ինտելեկտուալ և անձնային առանձնահատկությունների համախումբ, որ բնորոշ է շատ անձանց:

Վ. Դրուժինինի, Դ. Բոգոյավլենսկայայի աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ կրտսեր դպրոցական տարիքում ստեղծարարության զարգացման կարևորագույն մեխանիզմները հետևյալներն են՝

- կրտսեր դպրոցականների տարիքային նորագոյացության՝ խոսքային և պատկերավոր ստեղծարարության հետ ստեղծարարության կապը,
- կոգնիտիվ և անձնային բնութագրերի, դպրոցականի վարքի առանձնահատկությունների հետ ստեղծարարության կապը,
- ստեղծարարության և գործունեության արդյունքների կապը (տվյալ դեպքում՝ ուսումնական գործունեության):
- Երբ մենք փորձում ենք բացատրել՝ ինչո՞ւ են նույն սոցիալական իրավիճակում գտնվող երկու մարդիկ հասնում էականորեն տարբեր նվաճումների և հաջողությունների, մենք դիմում ենք «ընդունակություն» հասկացությանը: Նույն եզրույթով մենք մեկնաբանում ենք նաև ստեղծարարության կողմերից մեկը՝ ստեղծագործական ընդունակությունները:

Պետք է նշել, որ շատ երեխաներ՝ կախված անձնային առանձնահատկություններից, մտածողության յուրահատկությունից և սոցիալական միջավայրից՝ կենտրոնացած են ավելի շատ ոչ թե պատրաստի լուծումներ գտնելու, մտածողության կաղապարներից օգտվելու, այլ նորանոր փորձարկումների, նորը ստեղծելու ձգտման վրա:

Ընդունված է համարել, որ հենց այսպիսի երեխաներն ունեն առավել շատ նախադրյալներ իրենց ստեղծագործական ներուժի զարգացման համար:

Կարելի է առանձնացնել 4 հիմնական փուլ, որոնցով անցնում է երեխան ընդունակությունների զարգացման ճանապարհին.

1. Խաղային փուլ. այս փուլում ծնողները հանդիսանում են նմանակման օբյեկտ, իսկ երեխաներն ամեն ինչում կրկնօրինակում են նրանց վարքը: Այս փուլը համընկնում է նախադպրոցական տարիքի հետ:

2. Անհատականության փուլ. այս փուլը սովորաբար համընկնում է դպրոցական տարիների հետ, թեև կան երեխաներ, որոնց ընդունակություններն արտահայտվում են շատ ավելի վաղ շրջանում: Այս շրջանում, երբ երեխան հաճախում է ինչ-որ խմբակ, սկսում են դրսևորվել նրա անհատական ընդունակությունները: Այս փուլում մեծ դեր է խաղում ուսուցիչը կամ մարզիչը, որը զբաղվում է երեխայի ընդունակությունների վերհանմամբ և զարգացմամբ: Այս փուլում սովորաբար երեխան արդեն ձգտում է աշխատել և հասնել բարձր արդյունքների:

3. Աճի փուլ. այս փուլում երեխան ավելի ու ավելի է զարգացնում իր ընդունակությունները մանկավարժի օգնությամբ, իսկ ծնողները դառնում են զուտ «հանդիսատեսներ»:

4. Վարպետության փուլ. այս փուլում արդեն դեռահասը, եթե նա իսկապես ունի համապատասխան տաղանդներ, առաջ է անցնում իր հասակակիցներից և իր ընտրած ոլորտում հասնում է վարպետության մակարդակի: Այս փուլն, իհարկե, հազվադեպ է հանդիպում, և քչերն են հասնում այսպիսի բարձունքների [նույն տեղում:

Վերոնշյալի համաձայն կրտսեր դպրոցական տարիքի երեխան անհատականության փուլում է, ուստի երեխայի հետ աշխատող մասնագետները առավել շատ ուշադրություն պետք է հատկացնեն նրա ընդունակությունների անհատական դրսևորումներին: Ստեղծարարության զարգացման կարևոր փուլերից մեկը մտածողության կարծրատիպերից դուրս գալն է, մտածողության յուրօրինակությունը, որը թույլ է տալիս մտովի կապել հեռավոր, իրար հետ ակնհայտ կապ չունեցող երևույթները:

Գլուխ 3 Կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանական առանձնահատկությունները

Որպեսզի առավել հստակ հասկանանք կրտսեր դպրոցական տարիքում ստեղծարարության զարգացման «հնարավորությունների շրջանակը», անդրադառնանք կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանական առանձնահատկություններին:

Կրտսեր դպրոցական տարիքը, ինչպես յուրաքանչյուր տարիքային փուլ, ունի իր ուրույն դերն անձի ձևավորման և զարգացման մեջ: Կրտսեր դպրոցական տարիքը մանկության կարևորագույն շրջաններից է, որն ընդգրկում է երեխայի կյանքի 6-7 տարեկանից մինչև 9-10 տարեկան հասակը, որը համապատասխանում է նրա ուսուցմանը տարրական (1-4- րդ) դասարաններում:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի հոգեբանական հիմնական նորագոյացություններն են՝

- գործողությունների կամածնությունը,
- դրանց ներքին բնույթը (մտավոր պլանի առկայություն),
- ռեֆլեքսիան, որը թույլ է տալիս օբյեկտիվորեն վերլուծել սեփական դատողություններն ու արարքները:

Կրտսեր դպրոցական տարիքում զգալի տեղաշարժեր են կատարվում երեխայի իմացական գործընթացների ոլորտում. գերիշխող է դառնում մտածողությունը, որն աստիճանաբար ձեռք է բերում վերացական և ընդհանրացված բնույթ: Զգալի փոփոխություններ են կրում նաև գրավոր և բանավոր խոսքը, հիշողությունը (որը զարգանում է 2 ուղղությամբ՝ կամածնության և իմաստավորվածության), կամածին ուշադրությունը (10- 20 րոպե կարող է կենտրոնացնել ուշադրությունը):

Բազմաթիվ փոփոխություններ է կրում նաև կրտսեր դպրոցականի անձնային ոլորտը. 7-11 տարեկանում երեխան սկսում է հասկանալ, որ ինքն անհատականություն է, որն, անկասկած, ենթարկվում է սոցիալական ազդեցություններին, բայց և միաժամանակ պահպանում է իր յուրահատկությունը:

Կրտսեր դպրոցական տարիքում զգալի փոփոխություններ են կրում նաև երեխայի հույզերն ու զգացմունքները: Դպրոցում երեխան յուրացնում է ոչ միայն գիտելիքներ, այլև տարբեր պատմությունների, հեքիաթների միջոցով, որոնք կարդում և մեկնաբանում է ուսուցիչը, նա սովորում է շրջապատող աշխարհի տարբեր երևույթներին տալ համապատասխան հուզական-արժեքային գնահատական: Որքան

շատ է կրտսեր դպրոցականը ծանոթանում արտաքին աշխարհին, այնքան բարդ և բազմաբնույթ են դառնում նրա հույզերն ու զգացմունքները:

Ինչպես նշվեց, կրտսեր դպրոցական տարիքը համընկնում է մտածողության բուռն զարգացման հետ, որն, իր հերթին, գերիշխող դեր է գրավում ճանաչողական գործընթացների համակարգում: Հենց այս տարիքում, երբ ուսումնական գործընթացը համարվում է առաջատար գործունեության տեսակ, ուսման մեջ ստեղծագործական մոտեցումը հատկապես արդիականանում է:

Շատ երեխաներ՝ կախված անձնային առանձնահատկություններից, մտածողության յուրահատկությունից և սոցիալական միջավայրից՝ կենտրոնացած են ավելի շատ ոչ թե պատրաստի լուծումներ գտնելու, մտածողության կաղապարներից օգտվելու, այլ նորանոր փորձարկումների, նորը ստեղծելու ձգտման վրա: Այսպիսի երեխաներն ունեն նախադրյալներ իրենց ստեղծագործական պոտենցիալի զարգացման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրտսեր դպրոցականի համար առաջատար գործունեությունն ուսումն է, համապատասխանաբար դպրոցը՝ կարևորագույն սոցիալական ինստիտուտը երեխայի 66 ստեղծարարության զարգացման համար, կարող ենք վստահաբար փաստել, որ դպրոցականների ստեղծագործական ընդունակությունների, ստեղծարարության զարգացումը ժամանակակից դպրոցի առաջնային խնդիրներից է:

Այսպիսով, լայն իմաստով՝ դպրոցը, մասնավորապես՝ դպրոցական կրթությունը, այն կարևորագույն գործոններից մեկն է, որի հետ պետք է կապել ստեղծարարության զարգացման հնարավորությունները: Ասվածն առավել արդիականանում է, բնականաբար, կրտսեր դպրոցական տարիքում, քանի որ դպրոցական տարիքի համատեքստում սա այն կարևորագույն փուլն է, երբ դրվում է շատ ու շատ առանցքային որակների, այդ թվում և ստեղծարարության հիմքը, հետևաբար՝ դպրոցի սխալներն այս տարիքում կարող են ամենաքիչ կամ դժվար փոխհատուցվողը լինել:

Դպրոցում ստեղծագործ մոտեցումն ուսմանը օգնում է դպրոցականին լուծել իր առջև դրված ուսումնական խնդիրները՝ իր հերթին զարգացնելով ստեղծագործական երևակայությունը, պատկերավոր-ասոցիատիվ մտածողությունը, հիշողությունը, դիտողունակությունը, ինտուիցիան, դեր է ունենում երեխայի ներաշխարհի զարգացման մեջ: Արժանի ուշադրություն չհատկացնելով երեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը՝ ժամանակակից դպրոցը կկանգնի առավելապես «կատարող անհատներ» ստեղծելու ճանապարհին, ովքեր գիտելիքներ, հմտություններ, կարողություններ կունենան կատարողական, երբեմն

միայն՝ մեխանիկական աշխատանքի համար: Իսկ հաշվի առնելով ներկա դարաշրջանի տեղեկատվական հագեցվածությունը և զարգացման միտումները՝ կարող ենք ենթադրել, որ ժամանակի հետ այսպիսի անհատների աշխատանքը կվստահվի միայն տեխնիկային: Այսպիսով, ժամանակակից դպրոցի առջև դրված է լրջագույն խնդիր՝ ստեղծագործ մտքի մարզումը, ստեղծարար անհատի կերտումը, որն անփոխարինելի կլինի ցանկացած տեխնիկական սարքի հետ մրցակցելիս: Որպես ելակետային գաղափար մեզ համար ընդունելով հումանիստական հոգեբանության կենտրոնական մտքերից մեկը, այն է՝ բոլոր մարդկանց ի ծնե տրված ստեղծագործելու կարողությունը՝ ստեղծարարության զարգացման գործոններին, մեխանիզմներին հոդվածի շրջանակներում տրվում է ոչ պակաս կարևոր, բայցևայնպես երկրորդային նշանակություն:

Դպրոցում մանկավարժների խնդիրը ստեղծարար անհատների «ստեղծումը» չէ՝ բառի բուն նշանակությամբ, այլ բոլոր երեխաներին բնածին կերպով տրված ստեղծագործական պոտենցիալի վերհանումն ու զարգացումը: Պետք է հաշվի առնել, որ հնարավոր չէ երեխային ստեղծագործական ընդունակություններ կամ ստեղծագործական մտածողություն 67 «սովորեցնել», բայց լիարժեքորեն հնարավոր է ստեղծել պայմաններ, որոնք կնպաստեն կամ կխոչընդոտեն ստեղծարարության զարգացմանը: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, երեխայի ակտիվ հետաքրքրասիրությունը, ստեղծագործելու ինքնաբուխ պահանջը՝ դպրոցի առաջ դրվող այս խնդիրն առավել իրատեսական է դառնում:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել, որ կրտսեր դպրոցական տարիքը ամենազգայուն փուլերից է անձի ստեղծարարության զարգացման համար, և սա հստակ պահանջներ է ներկայացնում երեխայի զարգացման սոցիալական ինստիտուտներին, ինչպես դպրոցին, այնպես էլ ընտանիքին՝ վեր հանել և զարգացնել երեխայի պոտենցիալ ընդունակությունները՝ դրա համար համապատասխան միջավայր ապահովելով:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարող ենք նշել, որ կրտսեր դպրոցականի ստեղծարարության զարգացման հնարավոր ուղիները բազմազան են և կապված են նրա կյանքի գրեթե բոլոր ոլորտների հետ. ուսումնական գործընթացի՝ ստեղծագործական առումով հագեցված դառնալը, ստեղծարարության զարգացման ձևերի մշակումը, ծնողների և մանկավարժների՝ սեփական մտածողության կարծրատիպերի հաղթահարումը, դպրոցականի ժամանցում ստեղծարարության զարգացմանը նպաստող զբաղմունքների ներգրավումը այն միջոցներն են, որոնցով կարելի է խթանել կրտսեր դպրոցականի ստեղծարարության զարգացումը:

Գլուխ 4 Փորձարարական հետազոտություններ՝ ուղղված դպրոցահասակ երեխաների մոտ ստեղծագործական մտքի զարգացման բացահայտմանը

Զիվերտի «Ստեղծագործական ունակությունների չափման» թեստը

Հոգեբանության մեջ մի խումբ երեխաների օժտվածության և ստեղծագործական ունակությունների բացահայտման համար կիրառվում է հոգեբան Զիվերտի «Ստեղծագործական ունակությունների չափման» թեստը:

Զիվերտի թեստն իրենից ենթադրում է ստեղծագործական երևակայության զարգացմանն ուղղված որոշակի հարցերի կամ թեստերի լուծում, որոնց տարբերակները չափելով և քանակային գնահատում տալով կարող ենք հասկանալ երեխայի կամ խմբի օժտվածության մակարդակը:

Թեստի հարցերի օրինակներ են՝

- Թվարկել որևէ իրի կամ առարկայի օգտագործման հնարավոր եղանակներ կամ ֆունկցիաներ
- Կազմել նոր բառեր՝ տրված բառից
- Շարունակել նախադասությունը՝ հնարավոր մի քանի տարբերակներով
- Նկարել երևակայական պատկեր
- Գրել ասոցիացիաներ որևէ երևույթի հետ կապված և այլն:

Թեստի չափելիության գնահատման համար օգտագործվել են հետևյալ չափանիշերը՝

- 1-3 օգտագործման եղանակ՝ 10 բալ
- 3-8 օգտագործման եղանակ՝ 20 բալ
- 8-15 օգտագործման եղանակ՝ 30 բալ

Ընդ որում 10 բալի դեպքում երեխան համարվում է ստեղծագործական ունակություններից զուրկ, 20 բալի դեպքում՝ ստեղծագործ և 30 բալի դեպքում՝ տարբերվող մտածողության կրող կամ օժտված:

Երեխաներին տրվել է 3-ական բառ և յուրաքանչյուր բառի օգտագործման եղանակների թվարկման համար 2 րոպե: Փորձին մասնակցել է 11 երեխա:

Տրված բառերն են

- Ամրակ

- Գդալ
- Մատիտ

Ուսումնասիրելով և վերլուծելով փորձի արդյունքները ստացվում է հետևյալ պատկերը'

1 երեխան տվել է գումարային հաշվարկով 9 օգտագործման եղանակ և հավաքել 30 բալ, իսկ 10 երեխայից 2-ը տվել են՝ 6, 8-ը՝ 3 եղանակ:

Երեխաների կողմից թվարկված հետաքրքիր և տարբերվող պատասխաններից են եղել մատիտը, որպես մազակալ օգտագործելու հնարավորությունը, գդալը՝ որպես բացիչ օգտագործելու եղանակը:

Փորձի արդյունքներից պարզ է դառնում, որ 11 աշակերտից ընդամենը 1-ն է օժտված և տարբերվող ստեղծագործ մտածողությամբ, իսկ 2-ը ստեղծագործ են, գերակշիռ մասի՝ 8 սովորողների մոտ բացակայում են ստեղծագործության տարրերը:

Փորձի արդյունքները հաշվի առնելով՝ նպատակահարմար է երեխաների հետ անցկացնել ստեղծագործական ունակությունները զարգացնելուն ուղղված առաջադրանքներ, քայլեր և խաղեր:

Երեխաների ստեղծագործական միտքը զարգացնելու նպատակով կիրառվում են խմբային աշխատանքներ տարբեր թեմաների շուրջ: Օր՝ ուղղորդված շարադրություն: Ուղղորդված շարադրությունը կազմակերպվում է հետևյալ կերպ.

- Տրվում են թեմային համապատասխան բառեր, արտահայտություններ
- Կազմվում է հարցաշար
- Տրվում սկիզբը կամ ավարտը բառեր կամ մի ամբողջ նախադասություն:

Այսպիսով աշխատանքների ժամանակ ներգրավվում են բոլոր աշակերտները՝ իրենց հնարավորությունների չափով: Եթե լինում են աշակերտներ, որոնք դժվարանում են գրել, առաջարկվում է, նույն աշխատանքը կատարել բանավոր կամ նկարել: Աշխատանքները վերլուծելիս պետք է լինել նրբանկատ, և բոլորի աշխատանքներում գտնել առաջին հերթին դրական կողմեր: Քանի որ նպատակը երեխաների ստեղծագործական միտքը զարգացնելն է, գնահատելիս անհրաժեշտ է մոտենալ շատ զգույշ, ուղղագրական և կետադրական սխալները ուղղել՝ բացատրելով: Այսպիսի մոտեցումը ոգևորող է և խթանում է երեխաների ստեղծագործական մտքի զարգացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով հետազոտության արդունքների վրա՝ կարելի է փաստել, որ աշակերտների ստեղծագործական մտքի և առանձնահատուկ կարողությունների բացահայտման համար կարևոր դեր ունի ուսուցչի կողմից ստեղծարարությանն զարգացմանն ուղղված մեթոդներն ու միջոցները:

Ժամանակակից աշխարհում կրթական համակարգը ավելի լավը, հետաքրքրական դարձնելու համար ուսուցիչներս մոտիվացիայի տարբեր միջոցներ ենք փնտրում սովորողների համար՝ զարգացնելու նրանց ստեղծագործական միտքը, ձևավորելու անհատական ճաշակը և բացահայտելու նրանց առանձնահատուկ կարողությունները: Սակայն երբեմն բախվում ենք անարդյունավետ միջոցների հետ, քանի որ դրանց լուծման համար կատարվում է մակերեսային կամ ոչ մասնագիտական մոտեցում:

Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:

Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Խաչատրյան /Ուսուցման արդյունավետ հնարներ.- Եր.: Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ 16
2. Դ.Հայրապետյան.-Եր: 2007 Ստեղծարարության զարգացման և անձնային առանձնահատկությունների դրսևորման օրինաչափությունները ԺԹ.00.
3. Սերոբ Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014թ.
4. Богоявленская, Д. Субъект деятельности в проблематике творчества. Вопросы психологии, 1999, N 2, с. 35-41.
5. Кулагина, И. Возрастная психология, Москва, УРАО, 1997.
6. Философская энциклопедия, 2010. Հասանելի է http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/563/